ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսների նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչության փորձագետ Ստյոպա Ավետիսյանի

Ես՝ Ստյոպա Ավետիսյանս, ՀՀ ֆինանսների նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչությունում որպես փորձագետ աշխատում եմ 2019թ. նոյեմբերի 18-ին կնքված N 116 պայմանագրի համաձայն:

2020թ. մայիսի 18-ից մինչև 2020թ. նոյեմբերի 18-ը ներառյալ իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. Իրականացրել եմ ՀՀ պետական բյուջեի կատարման հսկողության 2020թ. ծրագրով նշանակված ստուգումների կատարման աշխատանքները:

Մասնավորապես.

- ՀՀ ֆինանսների նախարարի 2020թ. մարտի 11-ի N 5-Ա հանձնարարագրով ընդգրկվել եմ 2020թ. աշխատանքային ծրագրով համապատասխան կազմակերպությունում իրականացվող ստուգման խմբի կազմում: Ստուգման աշխատանքները սկսվել են 2020թ. մարտի 16-ին և ավարտվել են 2020թ. օգոստոսի 14-ին:
- ՀՀ ֆինանսների նախարարի 2020թ. հոկտեմբերի 14-ի թիվ 20-Ա հանձնարարագրով ընդգրկվել եմ 2020թ. աշխատանքային ծրագրով համապատասխան կազմակերպությունում իրականացվող ստուգման խմբի կազմում: Ստուգման աշխատանքները սկսվել են 2020թ. նոյեմբերի 6-ին և դեռևս ընթացքի մեջ են:

2. Մասնակցել եմ վերոգրյալ ստուգումների արդյունքներով ստուգման ակտերի, զեկուցագրերի, գրությունների, տեղեկանքների կազմման աշխատանքներին և համապատասխանաբար առաջարկություններ ներկայացրել ստուգվող կազմակերպություններում արձանագրված խախտումների ու թերությունների վերացման ուղղությամբ:
3. Մասնակցել եմ ստուգման արդյունքներով կազմված ակտերի նախագծերի վերաբերյալ տնտեսվարողների կողմից ներկայացված առարկությունների քննարկումներին և դրանց արդյունքներով վարչության դիրքորոշման կազմման աշխատանքներին:
4. Ապահովել եմ վարչության պետի կողմից տրված ընթացիկ հանձնարարականների կատարումը:

Ֆինանսաբյուջետային վերահսկողության
վարչության փորձագետ Ստյոպա Ավետիսյան